

**“ՄԻ՛ ԼԱՅՔ,
ԶԻ ԶԷ ՄԵՌԵԱԼ, ԱՅԼ ՆՆՋԷ”**

THE CHILD IS NOT DEAD BUT SLEEPING

**ԱՄԴԵՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱ
1998**

Ձ Օ Ն

Յիսուսը սիրող բոլոր ննջեցեալներուն,
որոնք մարմնաւոր կաւին մէջ զգացին սիրոյ,
յոյսի և հաւատքի ներգործութիւնը ու փակե-
ցին աչքերնին յաւիտենականին տեսիլքով:

Ի հող լուծուած մարմինները պիտի յառնեն
երբ լսեն հրեշտակապետին փողին ձայնը:

Ալպէո Նորատունկեան
Ապրիլ 30, 1991
Թորոնթօ

Երրորդ տպագրութիւն 1998

“ՄԻ՛ ԼԱՅՔ, ՋԻ ՉԷ ՄԵՌԵԱԼ, ԱՅԼ ՆՆՋԷ”

Բարձունքի և վստմութեան Մարմնացում Յիսուս Բրիստոս՝
Իր Յարութենէն յետոյ, առաջին հարցումը ուղղեց Մարիամ
Մագդաղենացիին, ըսելով. **«ԻՆՃՈ՞Ւ ԿՈՒ ԼԱՍ»**: Յաղթական
Յարուցեալը ցոյց տուաւ անդենականի ճշմարտութիւնը որպէս
ննջեցեալ և ո՛չ մեռեալ:

«Յիսուս ժողովրդապետին տունը եկաւ և տեսաւ մեծ
բազմութիւն մը, լացուկոծ ընողներ և աղմուկ-աղաղակ:
Ապա ներս մտնելով՝ ըսաւ անոնց. «Ինչո՞ւ խռոված էք
և կու լաք. մանուկը մեռած չէ, այլ կը բնանայ»: Իսկ
անոնք կը ծաղրէին զայն: Եւ ան, ամէնքը դուրս հանե-
լով, առաւ իր հետ մանկան հայրն ու մայրը և անոնք որ
իւր հետ էին, և մտաւ այնտեղ ուր պահուած էր մանուկը:
Եւ բռնելով մանկան ձեռքէն՝ ըսաւ անոր. «Տալի՛թայ,
կո՛ւմի», որ կը թարգմանուի՝ *աղջի՛կ, բե՛զի կը՛ստն, ելի՛ր*:
Եւ աղջիկը անմիջապէս ելաւ ու կը բալէր, վասնզի
շուրջ տասներկու տարեկան էր»--Մարկոս Ե.38-42:

Մինչեւ Յիսուս Բրիստոսի յայտնութիւնը և Անոր
յաւերժաբոյր Խօսքերը, *մեռնիկ* և *վախճանիկ* բառերը կը
նշանակէին անվերադարձ մեկնում: Անարդար և գրապարտական
մահուան գերագոյն անարգանքն էր որ կրնար վիճակուած ըլլալ
անհատի մը: Հզօր Փարաւոններու վիթխարի գերեզմանները վկայ
են իրենց անկենդան և ուղեկորոյս կամուրջին: Մահուան հանդէպ
ձեռնթափ էին նոյնիսկ դիւցազուններու բոլոր հնարաւորութիւն-
ները:

Յիսուս Բրիստոս, մարդկային ըմբռնումի և հասկացողութեան
որպէս երկնառափ Դարբին, կիզեց ու կռանեց *մահ* և *մեռնիկ* բա-
ռերը ու փոխարինեց զանոնք **ննջեցեալ** բառով: Ան լուսաւորեց
մարդկային բնական հասողութիւնը կոխկոտելով մահուան
ուրուականը և յարուցանելով Յայրոսի աղջիկը, Նային Բաղափի
որբեվայրիի որդին և Իրեն սիրելի բարկեամբ՝ Ղազարոս:

Հեթանոս իմաստասերներու համար, կեանքը հրածեցտ մըն էր որ գիրենք մահուան կ'առաջնորդէր: Անոնք կեանքի կամուրջը կը դիտէին որպէս մահուան անլոյծ խորհուրդը: Մառն մտերմութեամբ մը միայն մահուան գաղափարին հետ հաջտուած էին:

Մի միայն Քրիստոսի առաքեալները և հաւատաւորները, նման Ստեփաննոս նախավկային, բարձրագլուխ և անյողթողթ կրցան կենալ մահուան դէմ և ներում խնդրել Աստուծմէ իրենց դահիճներուն համար: 1915-ի մահասարսուռ ահազանգը երբ բախեց Հայ ազգին դուռը, հայ հաւատացեալներ արհամարհեցին մահը ու նայեցան բարբարոս դահիճներու աչքին, ուղիղ, անվախ և անխաբ:

301 թուականին երբ Հայ Պետութիւնը ողջունեց Յիսուս Քրիստոս որպէս իր Տէրը և Փրկիչը, ան ընդունած եղաւ նաեւ Անոր Խաչելութիւնն ու ամբողջանուէր զոհաբերումը: Այնուհետեւ "մահ"ը դադրեցաւ անփախչելի վախճան մը ըլլալէ մարդու կենսագործութեան ընդհատում, կամ անհատական համակարգի վախճան, ու դարձաւ *հո՛ւ՛ և ննջում*:

Իմացական էակ՝ մարդ արարած, վաղ դարերէ ի վեր բողոքած է մահուան դէմ իր ողբերգական գրականութեամբ, աշխարհական կամ կրօնական, ու ջանացած է լուծում մը, պատասխան մը գտնել, մանաւանդ, իր հերոսներու անփառունակ վախճանին՝ մահուան:

Համայնակուլ մահուան դէմ պայքարողներ ջանացած են գմուսելով անմահացնել իրենց հերոսները և սիրելիները: Ուրիշներ՝ Բանդակազարդ յուշարձաններով փորձած են յաւերժացնել իրենց աստուածները և դիւցազունները:

Աշխարհի թասերաբեմին վրայ կիմացուի մի միայն մարդու Որդի՝ Յիսուս Քրիստոսի յաղթական ձայնը, որ կ'ըսէ մեր բոլորին.

«Ես իսկ եմ յարութիւն և կեանք. ով որ կը հաւատայ Ինձի, դէպէտ մեռնի ալ, պիտի ապրի» --Յով. ԺԱ.25:

Ինչպէս աստուածային Կամֆն ու Խօսքերը իրարու միանալով ըսին. ***«Եղիցի լոյս և եղև լոյս»***: Նոյնպէս իմացական խաւարին ու մահուան մթութեան մէջ փայլատակեց լոյսի և յոյսի յաւերժութեան կենդանարար հաւաստիքը բոլոր անոնց, որոնք ուղեւորներն էին կեանքի կամուրջին վրայ, սակայն միջոց դէպի մահ:

«Ես իսկ եմ յարութիւն և կեանք. որ հաւատայ յիս, թէպէտ և մեռանի, կեցցէ» կը թրթռայ և կը ներշնչէ բոլոր

հաւատաւորները:

Յիսուս Քրիստոսի բնֆուջ և ոգեշնչող խօսքերը դարձան կարգախօս և նշանաբան բոլոր առաքելներու ջրթներու վրան: Առաքելներն ու անոնց աշակերտողները, ո՛չ միայն հաւատացին Յիսուս Քրիստոսի խօսքերուն, այլ՝ *վստահեցա՛ն* Անոր յաղթական Յարութեան, ու կնքեցին իրենց լոյս հաւատքը արիւնագիր դաւանութեամբ: Իրենց սերը և արիութիւնը ջաղախեցին հաւատքի՝ արիւնով, ամրապնդելու համար Արարատեան աշխարհի դպրեվան-բերն ու աստուածախօս եկեղեցիները:

Կա՞յ մխիթարութիւն և սփոփանք մահուան ցուրտ և դաժան ոտնաձայնին դէմ:

Ծարաւ հոգիներու և վշտահար սրտերու մխիթարութիւն և փառաբանական սփոփանք կա՞յ հաւատքի անխորտակելի հայրենիքին մէջ: Հայ ազգը մոռնալու չէ՛ որ Սուրբ Էջմիածնի կառուցումով, մեր հայրենիքը փոխակերպուեցաւ ու դարձաւ ***Հոգեղէ՛ն հայրենիք***՝ մը, հաւատքի՝ հայրենիք մը, որուն կենդանի և յաւերժօրէն խօսուն պատկերն է Խոր Վիրապը՝ վսեմ զոհողութիւնը, մեր սրբազան այբուբենը և Վարդանանց ու Ղեւոնդեանց նահատակութիւնը:

Ձի՞ բաւեր միթէ մեր աշխարհականներու և հոգեւորական-ներու սուրբ մարտիրոսութիւնը, որ մենք, այսուհետեւ նայի՛նք մեռնող մեր սիրելիներուն որպէս ***ննջեցեալ ներ*** մահուր հաւատ-բով և անխաթար նկարագրով: Որովհետեւ Յիսուսատես փաջ նահատակ Պօղոս առաքել կ'ըսէ.

«Եթէ կը հաւատանք թէ Յիսուս մեռաւ և յարութիւն առաւ՝ այդպէս ալ Աստուած ետ պիտի բերէ ննջեցեալ ները Յիսուսի միջոցով, Անոր հետ: ...Որովհետեւ Տէրը ինք հրամանով, հրեշտակապետին ձայնով և Աստուծոյ ջեփոքով պիտի իջնէ երկինքէն, և ամէնէն առաջ յարութիւն պիտի առնեն ի Հրիստոս մեռածները».-Ա. Թեսաղ. Դ.13-15:

Ուստի ո՛վ սգակիրներ, դիմեցէ՛ք դէպի կեանք, դէպի լո՛յս առաւօտ հաւատքով և լաւատեսութեամբ: Ինչո՞ւ կը գոյատեւէ Ա. Էջմիածին 17 երկար և զոհաբերող դարեր, եթէ ոչ մոռացութենէ փրկելու համար հաւատքի արժէքները՝ սեր, անձնուրացութիւն, փրկութիւն և Յարութիւն մեռելոց՝ ննջեցելոց:

Քարաշէն եկեղեցիներն ու տաճարները կրնան աւերակ դառ-

նալ, հայ հաւատացեալը կրնայ թմրած ըլլալ, սակայն լեռնանման մեր պապերուն հաւատքը կը խօսի՝ մեզի: Քրիստոնէական հաւատքի առանցքը **Յարութեան** իրագործութիւնն է, ինչպէս նահատակ Պօղոս կը վկայէ.

«Եթէ չկայ մեռելներու յարութիւն՝ ուրեմն Քրիստոս յարութիւն առած չէ: Իսկ եթէ Քրիստոս յարութիւն առած չէ՝ ի զուր է մեր հարողութիւնը, ի զուր է նաեւ ձեր հաւատքը:

...Եթէ միայն այս կեանքին համար յոյս դրած ենք Քրիստոսի վրայ՝ ողորմելի ենք՝ քան բոլոր մարդիկ: Ի՞նչ օգուտ է ինձի, եթէ մեռելները յարութիւն չեն առնոր, ուտենք, խմենք, որովհետեւ վաղը պիտի մեռնինք: Խորհուրդ մը կը յայտնեմ ձեզի, ամէնքս չէ որ պիտի ննջենք, բայց ամէնքս ալ պիտի նորոգուինք՝ յանկարծակի, ակրնթարթի մը մէջ, վերջին փոշի ատեն, քանի որ փողը պիտի հնչէ, և մեռելները յարութիւն պիտի առնեն առանց ապակատութեան, մենք ալ պիտի նորոգուինք:

Այն ատեն պիտի կատարուի այն խօսքը որ գրուեցաւ. «Մահը կուլ գնաց յաղթութեան: Մ'ըր է, մա'հ, քու յաղթութիւնը, ո'ւր է, ուժո՛րձ, քու խայթոցը»--Ա. Կորնթ. ԺԵ. 13-56:

Յարութեան անմեռ և անշէջ հուրը՝ անվերապահօրէն շեշտուած է թէ՛ բոլոր առաքեալներու և թէ՛ յաջորդող դարերու հոգեւորականներու կողմէ, ոչ միայն խօսքով, այլ՝ զգալիօրէն, ջօշափելիօրէն, տեսանելիօրէն և ապրումով որպէս անվիճելի իրականութիւն:

Լոյսեր հագած Յարուցեալը կը տողանցէ իւրաքանչիւր հաւատացեալի հոգեկան աչքերուն առջին, որպէս խարիսխ յոյսի և հիմ հաւատքի: Անոր ներկայութեան կասկածի խաւարը կը փախչի, անստգութեան մեզը կը մեկնի, շփոթութեան մառախուղը կը հեռանայ և թիւր հասկացողութեան աղջամուղջը կ'անյայտանայ: Մեր հոգեկան աչքերուն կ'երեւի պայծառակերպեալ Յարուցեալը, որ կ'ըսէ մեզի.

«Ինչո՞ւ մեռելներու մէջ կը փնտռէք»

ձեր ննջեցեալները, անոնք գերեզմաններու ցուրտ հողին տակ չեն, անոնք ի՛մ պաշտպանութեանս հովանիին ներքեւ են, անոնք

յարութիւն պիտի առնեն:

Հրաշափառ Յարութիւնը տօներու գերագոյնն է և ճանապարհը յաւերժութեան: Յարութեան այգալոյսին՝ անցեալն ու ապագան պիտի գրկախառնուին յաւիտենական *ներկային* մէջ:

Վեպի մը ողնասիւնը կը կազմէ դժբախտ ողբերգութիւնը, իսկ հաւատքի առանցքը կ'ամբողջանայ Յիսուս Քրիստոսի Յաղթական

ՅԱՐՈՒԹԵԱՄԲ

Ապրիլ 21, 1992 Թորոնթօ

ԱՍՏՂԵՐԷՆ ԱՆԴԻՆ

Ո՛չ մնաք բարով, ալ ցտեսութիւն,
Ճերմա՛կ բոյր, լոյսի և Յիսուսի գոյն,
Բո՛յր, որ մեկնեցար անդրագոյն հեռուն՝
 Քու սիրած Լոյսին,
 Աստղերէն անդին:

Թեւ առիւր որպէս երազ ու զեփիւռ,
 Երկնագնա՛ց բոյր,
Մայրամուտի պէս՝ այս հորիզոնէն
Շողերդ հաւաքած, շուքերդ շալակած,
 Միացար Լոյսին,
 Աստղերէն անդին:

Մինչեւ ձեռնուինք միւս կողմն երկնքի,
Ո՛չ մնաք բարով, ալ ցտեսութի՛ւն՝
Վայրկեանի մը չափ, բո՛յր մարիամանուն,
 Որ հասար Լոյսին,
 Աստղերէն անդին...:

--Ժազ Ա. Յակոբեան

Տէր Յիսուս Փրկիչ է կորուսեալին, նեցուկ
տկարին, սփոփանք սգաւորին, Տէր ու
պաշտպան որբին, բարեկան լինելուն, օգնա-
կան անկեալին, յոյս յուսաճատին, հովիւ
մոլորեալին, սրբութիւն հաւատացեալին:

Ա Ղ Օ Թ Ք

«Եւ հիմա, բարերար և բազումողորմ Աստուած, ընդունէ՛ այս ծառայող որ երկրի վրայ իր պանդխտութեան ժամանակը աւարտելով՝ ազատեցաւ ամէն յոգնութենէ և աշխարհը խեղդող խաբեբայական պատրանքներէն:

Միածինիդ աշխարհ գալովը սփանչելի խոստում մը տուիր մեզի. խոստացար մեռելները յարուցանել՝ Քու ամենակարող և հզօր խօսքովդ ըսելով անոնց.

«Ինծի՛ եկէ՛ք. բոլոր յոգնածներ ու ծանրաբեռնուածներ, և ես հանգիստ պիտի տամ ձեզի»:

Այդ խօսքիդ համաձայն հանգի՛ստ շնորհէ Քու այս ծառայիդ, ո՛վ տէր, մեր Աստուծը. Քու փառաւոր արքայութեանդ հանգիստին արժանացողներքու ցուցակին մէջ արձանագրէ գայն, և յաւիտենական յարկերուդ մէջ տեղ տուր իրեն: Եւ եթէ մարդկօրէն մեղանչած է այս աշխարհին յատուկ յանցանքներով, Քու անլուծանելի խօսքովդ թողութիւն շնորհէ իրեն: Փրկեալներու կարգին դասէ այս հանգուցեալին հոգին, Տէր, որպէսզի անոր հետ մենք եւս փառաւորենք Քեզ, ո՛վ Հայր, Որդիին և Սուրբ Հոգիին հետ միասին, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից: Ամէն»: